

ՄԱՅՈՒՆԻՄ

ԳԱԻԱՌԱՑԻՆԵՐՈՒ
ԿԻՍԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԻՍՐ

Ա. ՏԱՐԻ

30 ՕԳՈՍՏ. 1912

ԹԻՒ 21 22

Խմբագրուպե
Մ. ԻՓԷՔՃԵԱՆ

Արտոնատէր
Լ. ԹԱՊԻՊԵԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ինչ պիտի ըլլայ մեր դերը
Գաւառներու հասրահարութիւնները
Մուսային երեսն (բանաս.)
Հասարակական իրաւունքներ եւ քուրճիոյ գաւառները
Գարնան գիշեր (բանաս.)
Վարկեր ու Բարկեր
Դիմագիտական փորձեր

Գաւառային լուրեր

Գ. ԱԹԷՇԵԱՆ
ՎԱՆԻԿ
ԱՄԱՍԻԱ ՏԻՎԱՆԵԱՆ
ԱՐՄԷՆ ՄԱՆԿՈՒՆԻ
ԱՐՄԷՆ ԵՐԿԱԹ
ՀՐՈՒՆԻ
ՕԼԻԱ

ԱՄԱՍԻԱ

ՏԻՍՎԱՆ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՅՈՎՀԱՆՆԵԱՆ

«ԱՄԱՍԻԱ»Ի ՀԱՍՑԷՆ

آماسیه ده «آماسیه» غزنه سی مدیریت

Խմբագրության «ԱՄԱՍԻԱ» Կիսամսեայ հանդեսի-Ամասիա

Rédaction de la Revue «AMASSIA», a Amassia (Turquie d'Asie)

ԱՄԱՍԻԱ

Կը հրատարակուի ամէն ամսու 15ին եւ 15ին, բուրժերէն եւ հայերէն բաժիններով: Թուրքերէն բաժինը մօտաւորապէս 4 էջ, իսկ հայերէնը 12 էջ. երկու բաժինը միասին միշտ 16 էջ պիտի ըլլայ: Բաժանորդներուն տարեկան 24 թիւ պիտի տրուի:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Թուրքիա տարեկան 4 տէնիս

Արսաստանիս տարեկան 5 ֆր

» վիցամսեայ 0.50 »

» վիցամսեայ 2.50 »

Բաժնէզինը բացարձակապէս կաշխիշ է: Իրանոցումներու հաւատարմութիւնը անհրաժեշտ է: Իրանոցումներու հաւատարմութիւնը անհրաժեշտ է:

Տաւր օրինակ «Ամասիա» տպագրողին մէկ օրինակ հաւել:

ՏՈՔԹ. Կ. ՊԻԻԼՊԻԼԵԱՆ

ՎԵՐԱԲՈՒԺ ՄԱՍՆԱԳԷՏ ՎԵՆԵՐԱԿԱՆ ԱԻՏԵՐՈՒ

ՍՍՄՍՈՐ

Բարիկի հիւանդանոցներու մէջ իր մասնագիտութիւնը կատարելագործած ըլլալով, նորագոյն մեթոտներով կարճ ժամանակի մէջ արմատապէս կը դարձանէ հին և նոր ջերմամիզութիւնը, (պէլ սպլուխուլու) միզանցքի նեղութիւնը, փամփուշտի բորբոքումը, առնական անկարգութիւնը, սերմնահոսութիւնը:

Գաղղիական տիտի համար սպորտական դարձաններու հետ, մասնաւոր խնամքով կը կատարէ 606 ի ներարկումներ դիւրամաշելի գնով:

Մէդի և արեան մանրէտրանական լուրջ քննութեամբ, ջերմամիզութիւնէ ու Գաղղիական տիտի կատարելագոյն բուժմամբ ըլլալը և կամ հակառակը կը ցուցնէ (յանձնարարելի ամուսնանալիք երիտասարդներու):

Հիւանդ կ'ընդունի ամէն օր մինչև կէսօր Սամանի հիւանդանոցը, իսկ կէսօրէ վերջ Օսմ. Պանքայի կից իր մասնաւոր դարձանատան մէջ:

ԲԱՅԱԴՐՈՒԹԻՒՆ Ս. ՊԱՏԱՐԱԳԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆ

Հեղինակ՝ ԿՐՕՆԻՏԵՍ ԲԷՆԵ. Թ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆ «Սեբաստացի»

Կը յանձնարարենք սոյն գործը ամէն տնայնիք որոնք կը հետաքրքրուին կրօնական զգալունքներով: Դիմել հեղինակին և տեղա՝ խմբագրութեան:

ԽԱՐԱԾԱԿ

ԳԱԽԱՌԱՑԻՆԵՐՈՒ
ԿԻՍԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԵՍԸ

Ա. ՏԱՐԻ

30 ՕԳՈՍՏ. 1912

ԹԻԻ 21, 22

Խմբագրական

ԻՆՉ ՊԷՏՔ Է ԸԼԼԱՅ ՄԵՐ ԴԻՐՔԸ

Ամիսներ առաջ կեանքը բոլորովին տալքեր բուշերէ կ'առաջանար, իսկ այժմ բոլորովին տարբեր։ Ամիսներ առաջ ժողովրդային գիտակից մասսային կուրժը կ'ելլէէէր տիրող կարգերու կործանարար ընթացքին առջև. իսկ այժմ պահ մը կանգ առած կը պատրաստուի նա գործունէութեան։ Դեռ ամիսներ առաջ ժողովրդային կամքն ու արտայայտիչն ըլլալէ իսպառ հեռի իթթիհատական Պատգամաւորական ժողովին կողմէ սահմանադրական կարգերն ու ժողովրդային միահեծանութիւնը հարուածող օրէնքներ կը քուէարկէին և իթթիհատի խնկարկու և անոր փէշերուն առջև քծնող պետական ու ազգային պաշտօնեաներու կողմէն ամենայն խստութեամբ ՚իգործ կը դըրուէին ընդհանրապէս ո՛չ իթթիհատական և մասնաւորապէս Ընդդիմադիր տարրերու վրայ։ Այն ատեն դեռ սղատ խօսքը, ազատ մամուլն ազատ թատրոնը կաշկանդուած ու դաւառային պաշտօնէութեան քմածին գործունէութեան միջոցները զարձած էին։ Դեռ երէկ համիսլամութիւնը ամենաբուռն թափով առաջ կը մղուէր տիրող մտայնութեան կողմէ և անոր ոյժին հիացողներու ու կոթնողներու կողմէ ալ լուռ համակերպութեամբ կը քաշալերուէր։ Դեռ իսիստ մօտաւոր անցեալի մը մէջ աշխատաւոր ու բանւոր դասակարգը կ'արհամարհուէր ու այդ դատին անունով երդուընցողներու մէկ մասին կողմէն ալ լուռութեամբ կը ծափահարուէր. իսկ այսօր, այդ սեղմումի

կաշկանդումի քաղաքականութե Էն քնականորէն ծագում առնող, բոլորներու զայրութենիս և վերջապէս ընտանեաց թիւններու շնորհիւ թաւադէլ եկան սահման դրական բռնակալներն ու իրենց անհատական գիրքերն ու շահերը ապահովելու ձգտող իսլամ և ոչ իսլամ մականքոյ տարրերը:

Թէև, ներկայի մասին ալ ոչ բացարձակապէս լաւատես, սակայն համեմատական բաղդատութեամբ կրնանք ըսել թէ՛ այսօր աւելի ապահով ենք քան երէկ, քանի որ մեծագոյն մասամբ մեր գլխուն իբր գամակեան սուր պատենայող ձուլումի քաղաքականութեան ռազմիրաններն հրապարակը ստիպողաբար թողած են, աւելի ազատական տարրի մը և աւելի ազատական սկզբունքներ պարունակող ծրագրի մը, և այսօր ժողովուրդը պետական պաշտօնեաներու անհարկի ու անխիղճ միջամտութիւններէն ու սպառնալիքներէն ազատ թողուելով, կը հրախրուի ազատ քուէարկութեան, ազատ արտայայտութեան, և վերջապէս ազատ գործունէութեան:

Արդ, երէկի և այսօրուան համառօտ բաղդատականն ընել յետոյ մեզի կը մնայ ըստ մեր խորագրին հարցնել թէ «ի՞նչ պէտք է ըլլայ մեր գիրքը» ներկայ իրականութեան հանդէպ:

Իմաստ և քնդունած ճշմարտութիւն մը, լաւ ևս է ըսել իրականութիւն մըն է թէ՛ սահմանադրական երկիւններու մէջ ժողովրդային կամքն է որ կը գործէ իր սրտաբայութիւններու բերնով, այսինքն մէկ խօսքով իր մէպուսներու միջոցաւ: Այդ մէպուսները երբ իսկապէս ժողովրդային ձայներով կ'ընտրուին, ապահովօրէն անոնք կ'արտայայտուին, զիրենք բնորոշներու յաւերտն, պահանջներուն, պէտքերուն և վերջապէս անոնց փափաքներուն ու իղձերուն համաձայն և կը քուէարկեն ժողովրդային օրէնքներ, որոնք կուգան բարեփոխել երկրին ճակատագիրը: Ահա մենք կը գտնուինք այսպիսի նուիրական ու միանգամայն վճռական վայրկեանի մ'առջև, երբ կըցանք մեր իրական շահերը գիտակցօրէն պաշտպանել, լաւ, հակառակ պարագային դրութիւնը կը մնայ այն, ինչ որ էր դեռ երէկ ու առջի օր:

Այս առթիւ շատեր պիտի փորձուին հարցնել թէ փոքրամասնութիւն ներկայացնող հայութիւնը, եթէ իսկ զիտնայ իր քուէները գիտակցօրէն գործածել ու ընտրել քանի մը հայ մէպուսներ, ի՞նչ կրնայ արժեք բացարձակ մեծամասնութեան քով: Այո՛, եթէ ազգայնական տեսակէտէն գիտենք այդ այդպէս է. սակայն երբ մենք ամենաբոլորն լեզւով ու նոյն իսկ արհամարհանքով կը պատմախոսենք ազգայնական ծրագիրներէ՝ ու ձգտումներէ՝ առաջնորդող տարրերուն, հապա ի՞նչ որամաքանութեամբ իրաւունք կ'ուզենք տալ մեզի ազգայնական գաղափարներ տածելու, երբ կը պնդենք թէ ազգայնամուլ քաղաքականութիւնը փաստակար է ու անողամարտական է. բընականօրէն մեզի համար բացառութիւն չի կրնար ներկայացնել:

Ոչ, մենք պահելով հանգերձ մեր ազգային պատմա-անհատական գա-

յութիւնը. ամէն պատահարներու առջեւ, երբէք թող տալու չենք մեզի ազգայնական քաղաքականութեան հետեւելու, որովհետեւ այդ դրութիւնը որքան վնասակար է Թուրքիոյ, նոյնքան և յԹԻՐԷԱ աւելի վնասակար է Հայաստան:

Մենք, իբր Օսմանեան սղատ ու գիտակից քաղաքացիներ, որ ցեղին, որ տարրին մէջ ալ ու նշմարենք արժանիքներ ու կարողութիւններ՝ անկեղծօրէն պէտք է քաջալերենք զանոնք. Մեր գպրոցներու զարգացումն ու յառաջիկայացումը կրնայ մեր հանգստութիւնն ու զոյսթիւնն ապահովել: Ահա՛, այս ճշմարտութեան վրայ կը թեմած, արհամարհելու զօրաւորի ու ուժեղին յետեւելու միամիտ ու այլանդակ տրամաբանութիւնը, և Տաճկաստանի համապետական կեանքն ու հայ և քաղկացոյցի ազդերու իրականութիւնը հանդամանօրէն նկատի առնելով, Ա. Գ. Հնչակեան կուսակցութեան տակախիւսին հիման վրայ կը փութանք մեր խորագրին պատասխանել:

1. — Անդրաւնքով պէտք է ընդունիլ գործակցութիւնն առաջագէ՞ծ տարրերու և կուսակցութիւններու հետ:

2. — Ընդգիծողիք ոյժ ստեղծելու համար ազգայնական կործանարար հոսանքին դէմ և ոյժ տալու համար Թուրք տարրին առաջնական հոսանքին և մշակելու համար անոր մէջ ազատական ոգին՝ նախապատուութիւն պէտք է տայ այն թուրք քաղաքական կուսակցութեան որ համեմատորար տեղի ազատական է (ձախ) և առաւել ևս կը ներկայացնէ առաջնական սկզբունքներ, որախին է Իսիլաւէր:

3. — Ընդհանուր ուղղութեամբ թուրք կուսակցութիւններէն մէկին յիշիլաֆին հետ ժամանակաւոր գործակցութիւն կոչայնելով հանդերձ, պէտք է ուշադրութիւն ընծայել Աղգ. իրականութեան մէջ գործող կուսակցութիւններուն ու խմբակցութիւններուն:

Ահա՛ մեր բռնելիք դիրքի մասին այսքան մը բացատրութիւն տալէ յետոյ, կոչ կ'ընենք բոլորին որ այս օգտաշատ քաղաքականութեան ոյժ տան. քանի որ իրականութեան պահանջն է ան . . .

Գ. ԱՅԷՏԵԱՆ



ԳԱԻԱՌՆԵՐՈՒ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԱՆԽԱՏԱԿԱՆ ՆԱԽԱԾԵՆՈՒԹԵԱՆ ՊԱԿԱՍՐ

Յեղեկութեամբ ճշմարտութիւն մ'է արեւելքցիի ոչ-նախաձեռնող վիճակ մը ուսանողը: Եւ սակայն ազգերու, ժողովուրդներու, պետութիւններու, բնչպէս նաեւ անհատներու յառաջդիմութեան ու զարգացման առաջին պայմանը նախաձեռնութիւնն է:

Որքան ատեն որ անհատներ և հաւաքակառութիւններ ընթացիւքին չըջագոտուած կը համարեն անյաղթելի դժուարութիւններով, նոքա կը մնան անշարժութեան մէջ, զարկ սրելէ ձգտումէ ու կը յետադիմեն: Երբէն իսկ անշարժութիւնը և աւելորդ ուղիով ոչ-յառաջդիմութիւնը, յետադիմութիւն կը նշանակեն: Ոչ ոք կարող է ուրանալ միջավայրի առաջնակարգ ազդեցութիւնը. և սակայն միջավայրը գործունէութիւն, քաջութեան հետ խառնուած նախաձեռնութիւն կը պահանջէ: Չեմ կրնար ըսել որ անապատէն ջուր վազցնենք. այլ կ'ըսեմ որ ջրառատ վայրերէն ազրիւրներ հոսեցնենք: Ըսել է անկարելիին փոխարէն՝ հարաւորը և զգուսկարը կ'առաջադրեմ:

Այս ընդհանուր թելադրանքն է որ կ'ուսենամ, երբ «Ամասիա»-ին զրեւ կը փորձեմ, նկատի ունենալով որ ան նախաձեռնութեան ուղին քաջադիմող ազգակ մ'է:

Թուրքիոյ անապատ ըլլալէ հետո՛ր խիստ բարեբեր երկիր մըն է: Բնական հարբստութիւններն ճիշտ են Եանեանէն մինչև Պաղատա, Հայաստանէն մինչև Սլաւիա: Ու այս բնդարձակ արգասաբեր վայրերում մէջ կը բնակի հազիւ 30-40 միլիոն ժողովուրդ մը՝ որը սակայն, կրնամ ըսել համարձակ, չի զգտուիր բնութեան տրւած միջոցներէն, ո՛չ թէ որովհետեւ ան-

բնդունակ է, այլ գիտաւորաբար անոր համար ու վախկոտ, աննախաձեռնող է:

Երկու որոշ պատճառարանութիւններ կը լսուին այս ըսածներու դէմ. Ա. կ'ըսուի որ երկիրը անապահով վիճակի մէջ է. սահմանադրական չորս տարիները ներքին ու արտաքին մշտադիմող փոթորիկներով անցան. ո՛չ Եւրոպային մեզ վստահեցաւ կը դրամազուլուր մեր երկիրը մոցնելու և զայն չէն յսելու համար, և ոչ ալ մեր երկրէ մանր դրամատէրերը կրցան ունենալ այն ապահովութիւնը թէ՛ իրենց գործածելիք դրամազուլուր յափշտակութեամբ և կամ առժամանակ չորսպարակուսով մը չ'աւար փճանաւ: Բ. կ'աւարկուր թէ՛ թուրքիոյ մէջ չ'կան խոշոր դրամատէրեր որոնք իրենց սեփական դրամազուլսով կըրնան անտեսական կտրելու ձեռնարկները: Այն պէս որ իզուր տեղ գործի դըրուած զբաղը վատնուած պիտի լինի առանց արդիւնքի ու ատոր հետեանքով մանր դրամատէրները պիտի սնանկանան, չարաչար պիտի տուժեն:

Ահա՛ երկու ըստ երեւոյթին խիստ արամադանական պատճառներ՝ որոց վերջածուծին պիտի աշխատիմ, ժառանգելով ատուց ներքե թագնուած լսկական մրտավախութիւնը և անձեռնորէջ ոգին:

Աւարկութեան ու կէտը ունի իր հիմնական արդարացումները: Արդարեւ երբ երկիր մը չարունակ թատերավայրը կը հանդիտանայ ներքին բերտութիւններու, շարժումներու, սպաննութիւններու և առեւտրականներու ու կ'զուարթաներու պարզ է որ տեղացի դրամատէրերը չպիտի վստահին իրենց ունեցածները գործի մէջ դնելու, չահագործելու, ինչ որ արդիւնա-

րերութեան յետամնացութեան կը նպաստէ: Եւ սակայն եթէ այս պայմանները տեղացիներու տնտեսական ձեռնարկներուն կրնան արգելիչ պատճառներ լինել, ոչ ապաքէն նոյնը առաւել չափով պիտի լինէր նաեւ օտար դրամատէրերու համար: Մենք կը տեսնենք Եւրոպացի ու Ամերիկացի դրամատէրը աւելի յանդուգն, աւելի վստահ, մեր վրայ՝ քան թէ մենք: Մէկէքի թողունք գեռ ծովեզերեայ քաղաքներու անդորրութիւնը՝ որ դարձեալ տեղական դրամագլուխը չէ որ կը գործէ այլ օտարը, ասնենք գաւառները: Հոն եւս օտար դրամատէրն է գործողը: Եթէ իրապէս ապահովութիւնը կրնայ խանգարել, աւելի պարզ բառով արգիլել անտեսական ամէն ձեռնարկ, ապա ինչո՞ւ Եւրոպացին մատամբ կը վստահի այդ յարութեան տակաւնութեան՝ չսկ մենք ոչ: Աս փաստ չէ՞ մեր դրամատէրերու անեղած մտաւարտութեան: Եթէ անոնք չարունակեն այդպէս մտածել, ինչպէս այս երկիրը պիտի ծաղկի, վստահի անկարելի է որ ապահովութիւնը մէկէնիմէկ հաստատուի: Ես կը պնդեմ աւելին. նոյնիսկ ապահովութեան համար պէտք է արգիւնաբերութեան զարգացման ոյժ տայ: Կարաւանով (ուղտով, ձիով, էջով) փոխադրութիւնն է աւելի ենթակայ աւարի թէ երկաթուղիովը: մովնա՞ն է վստահելին՝ թէ չողենաւ: Խանութիւնը աւելի վստահութիւն կը ներշնչեն թէ մեզ և թէ օտարներուն, թէ գործարանները:

Առարկութեան ր. կէտը բնաւ, ունէ հիմք չունի. ճշմարիտ է թուրքիոյ դրամատէրերը չեն նմանիր օտար դրամատէրերուն: Եւ սակայն ո՞վ բաւ որ Թիւրքիացին բնաւ կապիտալ չունի, վստահի եթէ բազդատութեան դնենք Թիւրքիոյ մէջ չըջարեութեան շահագործման դրութեամբ արտաքին ու ներքին կապիտալը, վերջինին գոյութիւնը հազիւ նշմարելի կը լինի: Բայց կրնամ հաստատել որ, եթէ

Թիւրքիացի կապիտալիստները ունենան մի քիչ յանդգնութիւն, (risque), ինչ որ չի պակսիր Եւրոպացիին, այն ժամանակ տեղական կապիտալը մէջտեղ կ'ուզայ, կը գործէ և իր օգտակար արդիւնքները կ'ուտայ: Չեմ կրնար ըսել թէ տեղական կապիտալը պիտի վստահէ դրսինը. (և ատոր համար մասնաւորապէս աշխատելու այ պէտք չկայ) բայց մօտ ժամանակուայ մէջ պիտի տայ նշանակալի օգուտ. և որ ամենակարեւորն է, թագուած չստ մը դրամագլուխներ հրապարակ պիտի գան, չ'պիտի ժանգոտին ու ասանձին-առանձին լինել չ'կրցածին, միացած պիտի կրնան ընել տմնայն պիւրութեամբ: Իսկ ասկէ երկիրն է որ կ'օգտուի. արդիւնաբերութիւնը կ'աճի, ժողովուրդը գրողով կը պսնէ, կեանքը կը զարգանայ: «Մեր դրամագլուխը քիչ է, եթէ գործենք կը մեծատուինք» ըսողները մեծադայն վախկոտները չեն միթէ. առեւտրական, արդիւնաբերական յաջողութեան համար, նետուել պէտք է: Այդպէս ըսողները ապահովաբար աւելի լաւ կ'ընեն, եթէ իրենց «փոքրիկ» դրամագլուխները միացնեն և «մեծը» կազմեն:

Ուրիշ նկատողութիւն մ'եւ մեր «ազգասէր» դրամատէրներուն: Եթէ անոնք իրապէս կ'ուզեն որ այս երկրը (իրենց բառով հայրենիքը) յառաջդիմէ, ապա ուրեմն պէտք է գործով աշխատին այդ յառաջդիմութեան, ճրճուեն բառերով, վարա՞ն, միլլիք սրտաւրով երկիր մը չի յառաջդիմիր, ազգ մը չի զարգանար: Անհրաժեշտ է չէնց այդ յառաջդիմութեան ու զարգացման անսակէտէն, ոյժ տալ որ երկիրն մէջ գոյութիւն ունեցող դրամագլուխը մէջտեղ պայ, հարստութիւնները շահագործուին. այդպէս եթէ երկիրն ամբողջ անտեսականը շարունակէ մնալ «օտարին» ձեռք, ալ ո՛ր կը մնայ իրենց հայրենասիրութիւնը, ազգասիրութիւնը, ժողովուրդը կը գաղթէ որովհետեւ ապա

բելու համար գործ է՝ գտնել, իսկ գործը հայթայթելը երկրի բնական հարստութիւնները, հանքերը, անասունները, շուր, բուսականութիւնը, կենդանիները շահագործելով է որ կ'ըլլայ: Իսկ մեր դրամատէրերը կը ներշնչեն, «գլղել» կ'աշխատին: անիմաստ դիզում է այս:

Մեր կոչն էր գաւառի քիչ շատ տեւոր (շրջափակել) դատակարար, մէկդի նիտել իրենց հնամենի վախճանութիւնը, իրապարակ լեռեր իրենց ունեցածները:

Հանագործել ամէն կերպով հարուստ այս միջավայրը, ապահովարար դարձնել իրենք է որ կ'օգտուին ասկէ: Գաւառացին մոռուր թռչքներ լնելու ապացայցր տուաւ: Կը յուսանք ու կ'ապանենք որ նա իր անտեսական ձեռնարկներովը նոր կեանք պիտի տայ գաւառին: Սա է բուսական պահանջը: Այդ ուղղութեամբ աշխատելը՝ գաւառի վերակենդանութեան ծառայելը ըսել է:

ՎԱՆԻԿ

ՄՈՒՍԱՅԻՆ ԵՐԵՐԷՆ

Այն օրէն իվեր զեզ սիւելու
հոսուսներ քի բէպէս անսահման,
Բայց հոգիս երգ մը ունեւ սիրալուր
Երգ մը պատրանքի եւ արբուրեան.

Սիւերգ մը անդէն երգահրմայ
Քնիւս սրսիս մէջ սիրահրաւեր,
Որոնք թուրքերու վրայ անմահական
Հրեւանգներ չորսուն երբ կը նկարեն:

Հիմայ եւ զեզ չեմ սիւեր օրիորդ
Ոնոր հանար քե եւ կուգեմ երգել,
Մուսայից վառքը եւ սիւել զանոնկ
Ձեզ չեմ կրնար այլ եւս եւս սիւել.

ԱՄԱՍԻԱ ՏԻՎԱՆԵԱՆ

ՀԱՍԱՐԱԿԱՆ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐ

ԵՒ

ՅՈՒՐԲԻՈՅ ԳԱՒԱՆՆԵՐԸ

Գետնութիւն մը իր երկրի ժողովուրդին քաղաքակրթական նկարագրին ներկայացուցիչը և հողեկան նկարագրին ալ թարգմանն է: Քաղաքակրթ ժողովուրդներ են որ քաղաքակրթ պետութեան մը թեկն ասկէ կ'ուզեն ապրիլ: Սարկափառներ, փոքրոգիներ, սոցիալի մը կեանքն ապրիլ սիրողներ, չեն սիրեր ապրիլ լայնամիտ պետութեան մը հովանաւորութեան ասկէ, որովհետեւ նա իրենց քաղա-

քակրթական նկարագրի ոչ ներկայացուցիչը և ոչ ալ նոգեկան նկարագրին ալ հարազատ թարգմանն է: Պետութիւն և ժողովուրդ համահաւասար գիտնի մը վրայ կը գտնուին շարունակ: Մին միւսին ներկայացուցիչն է:

Եթէ թուրքիան բունապետական դարուոր կեանք մը վարից, այդ կը ցուցնէ թէ թուրքիացին ալ այդ կեանքն ապրելէն ախորժեցաւ: Գրաստները նոյն իսկ իրենց

այժմու անտանելի կեանքը պիտի չ'ապ-
րէին, եթէ իրենց վարած կեանքը դատե-
լու չափ հոգեկան րանականութեամբ մ'օժ-
տուած ըլլային բնութենէն: Թուրքիա-
յի իր մեծամասնութեամբ զուրկ էր ազ-
նիւ գաղաղութենէն և ազնիւ գաղաղութե-
րարձք րանականութենէն: Ուրեմն ազ-
նիւ պատուիրէ մը անու: համար արա-
մարեցի պատի գար: Պէտք էր բռնա-
պետական պետութիւն մ'ունենար Թուր-
քիային ու ժառանգ մը կրէր անոր ա-
մէն հարուածներն և կեղեքիչ լուսանք-
ները: Պէտք էր ամբարները պարպուէին
զարաւարին կողմէ: Իր ընդգիծմամբ պա-
րագային խարազաններու տարափը պէտք
էր իջնէր ըր գլխին: Բանտէրը պէտք
էին իրմով լէշուէր: Կախաղաններու վը-
րայ իր սիրելիներու մէկէ աւելի դիակ-
ները, քանի մը անգամներ՝ ճոճըր պէտք
էր դիտեր նա: Դաճապետներ իր գլու-
խը վայրկեանի մը մէջ կտրած միջոցին,
իրին: անողոք սուրին պէ: անողոք սիրտ
մը պէտք էին ցուցնել իրենց ա մեզ դա-
տու պրտեալին: Այս ամբողջ Թուրքիա-
ցիս պէտք ունէր տեսնելու: Մինչև այն
ըր դէ: ինքը պէտք ունէր տեսնելու, քա-
նի դեռ զանոնք կրկու հակում ունէր:
Իր ամբողջութեամբ ստանձանքներու այդ
նոցին մէջ խորովուելու պէտք ունէր,
հելուէ մարմիններու նման կամ օդը ցըն-
դելու, կամ մաքուր մետաղներու պէս
տակունութիւն ցոյց տալով ճկունաստու:
Այս վերջներ, Թուրքիացին ցոյց տուաւ
չառ իրաւամբ: Յուլիսեան յեղափո-
խութեան անաղել որոտումն էր ատի-
կա:

Այդ շարժումը բողոքի շարժումն էր,
ուղղուած Անապատ, Մարգարէին քըսա-
ներդդ գարու գիւտապէս բռնակալին
— Համիտ — յաջորդին դէմ, որ կ'ուզէր
միլիտատար մարդոց ճակատադիր իր ա-
փին մէջ առած, զանոնք իրեւ խամաճիկ
գործածել: Այդ, Թուրքիայ սղմատութիւ-

նը ցուցնող և անոր քաղաքակրթութեա-
տակ ըլլալը ապացուցանող շարժումն էր:
Այլևս չ'երկրպագելու, ուժեղին առջև
չ'իտնորհելու բռնաւորին հարուածին
ստակ, բողոքողի և պանանջելու ստանանին
մէջ մնալու, հակառակ պարագային բմ-
րատութեան պատնէշին վրայ ելլելու
կամքը ցուցնող շարժումն էր անիկա: ո-
րով քաղաքակրթութեան դատաստանին
առջև Թուրքիան դեռ ապրելու իրաւուն-
քը ստացաւ: Եւ ուրեմն Թուրքիան
կ'ապրի իր քաղաքական անկախութեամ-
բ՝ ախքան ատեն, որքան ատեն լճաց-
եալ կեանքը կ'արամարհուի իրմէ և ա-
տակ կ'ըլլայ քաղաքակրթութեան ծիրա-
նինեղով պծնուելու և զարգարուելու հա-
մար, շարունակ շարժելու...:

Շարժումն նշանակութիւնը երկու կեր-
պով կը հասկցուի: Դեպի ետ երթալն ալ
շարժում է: Թուրքիան ատենց կարգէն
չեղաւ րարեղղարար: ինչպէս կ'ուզէ ի
րանը ըլլալ: Այս տակաջն չը նշանակի
թէ, Թուրքիան րացառութիւն կազմեց և
պիտի կազմէ պետական յեղաշրջման պրա-
մութեան մէջ և իր մէն մի քայլափոխը
անցած է և պիտի անցի դիակներուն
վրայ չը դրած: Ոչ, յետաշրջականու-
թեան սև ուրուականը՝ ոչ մեր միլիտոր-
տէն սրբուած է և ոչ ալ անոր ծանրա-
լախոր՝ մեր վրայէն բողոքովին վերցուած:
Թուրքիան դեռ իր երկունքի չըջանին
մէջն է, յղի արիւնալիր տեսարաններով,
որոնցմէ յետոյ պիտի ծագի ԱՐԵՊԱԿԸ...:



ԻՐԱԽԻՆՔԸ... հասարակագիտական
գասակարգային հասկացողութիւն ունի:
Քաղաքա իրի կրկիրներուն մէջ, քաղա-
քային վայելած լայն ազատութիւնը ի-
րեն նամար րբաւունք համարուած է,
բայց բռնապետական կրկիրներու մէջ ոչ,
Իրաւունքը հոս իր նշանակութիւնը կը

կորսեցնէ և տարբեր հասկացողութեամբ կ'ըմբռնուի: Հասարակապետական երկիրներու մէջ քաղաքացին, գրական, արհեստական, արուեստական, ճարտարարուեստական ու գիտական բոլոր ճիւղերուն մէջ ազատ է իր ոյժն և կարողութիւնը ներածին չափով՝ յառաջադիմելու, զարգանալու և այդ բոլորին միջոցները հայթայթուելու համար իր կառավարութենէն պահանջելու և շարունակ պահանջելու օրէնքներ: Այսքան լայն չէ քաղաքացիին համար իրաւունքին սահմանը՝ բնառօգիտական երկիրներու մէջ, ուր ընդհանուր ինչպէր մասնաւորներու շահին զոհ կ'երթայ շարունակ: Մամուլ, բեմ, մէջ գրիչ և լեզու չափաւորուած և սահմանաւորուած մնալու և արտայայտուելու դատապարտուած են, որոշարութիւնը ու ճշմարտութիւնը հրապարակուելու բռնակերպութիւն: Քրէական յանցանքի պատասխանատուութիւն հրապարակուելու ծանր գործ մ'է ուժեղին ընդդիմալը և տիրողին բռնաճար այս վերջիններուն համար: Ստրկամտութեան, մահացուցիչ փրկափաշարութիւնը կ'ուզուի աւելն ուրիշ թագաւորեցնել ու այդ խնդրով պատրաստել հանրութեան միտքը:

—Ահա իրաւունքի հասկացողութիւնը միայն և միւսին մէջ:

Այս վերջին դրութիւնը սակայն վերջ պիտի գտնէ: Իրաւասութեան լայն սահմաններ գծող օրէնքներ են որ ապրելու իրաւունք պիտի ստանան՝ բանտի, չղթալի, կախաղանի մէկ խոսքով ԲՆԵՈՒԹԵԱՆ փրկափաշարութիւններ յօդս ցնդելով:

Այս է պատմութեան գծած ճամբան: Այսպէս պիտի լլայ և մեր երկրին մէջ, իրերու բնական ընթացքը այս կը ջրեցնէ ամէնուս: Աշխարհ դէպի ժողովրդապետական ուղին է որ կը քալէ:

Ժողովուրդ և պետութիւն կապին յարաբերակամ կեանք մը, մէկուն մահը՝

մահն է միւսին, իսկ մէկուն կեանքն՝ կենդանութիւն միւսին: Այս սկզբունքը որդեգրուած չէ բնապետական երկիրներու մէջ: Հոն, պետութիւնը ճանաչով ինքզինք Աստուածային հաստատութիւն մը, կ'ուզէ ժողովուրդը ստորնութեան ճանրճնելուն մէջ տեսնել: Ապականութեամբ լեցուն կ'ուզէ մը ըլլալ կ'ուզէ, առանց փափաքելու որ իր երկրպագուները զինք քննութենէ մը անցնելէ յետոյ երկրպագեն:

Ժողովրդապետական երկիրներու մէջ սակայն, հակառակն է բոլորովին: Հոն կ'ուզուի ժողովուրդը մեծ ճանչնալ և իրենց պետական փոռաւորութիւնը անոր փարթիւմ փոռաւորութեամբ մէջ տեսնել: Եւ ահա հոն է յաջողութեան մեծ գաղտնիքը քաղաքակիրթ այդ աշխարհներուն, ուր Քանանու երկրին նման կաթ և մեղր կը հոսին:

Ժողովուրդին անկապտելի իրաւունքն է մամուլ ազատութիւնը ուր կ'արտայայտուի բոլոր դատաւարներու հոգեբանութիւնները սրնց օրինական հողի վրայ կատարած ազնւութիւնը և որ կը ծնի ճշմարտ ազատութիւնը, եղբայրութիւն և շուտարութիւնը: Գրիչը անհատին խղճի ձայնը ներկայացնող գործին է: Ան իկա չղթալակապ խեղդելը հասարակական օրէնքին դաւաճանել կը նշանակէ:

Անհատական սեպականութիւններ, բնակարան, անգետան, ինչքեր և այլն պետութեան կողմէ պէտք է անբռնաբարելի համարուին: Կառավարութեան պարտքն է ոճրագործները խտուել պատմի օրէնքը տրամադրութեան յանձնելով, և գիտցնել իրենց թէ, իրենց չափ տարելու իրաւունք ունի իրենց բռնաբարած ընկերն ալ: Իրենց չվերաբերածը կուտպուել, էն ստակալի անբարոյութիւնն ըլլալը ոճրագործներուն հասկցնել կառավարութեան պարտքն է: Ան պէտք է կրթիչի և դատաւարակչի դերին մէջ, իր

զճիտ նկարագիրը յուզցնէ :

Բեմ և ընկերակցական հաստատութիւններ, պետութեան չափազանց պարտ է արժանանալ : Անոնք խաւարին հայածիշները ըլլալով, հազածիշներն են տգիտութեանց լակ փողանար Բերովքները իսկական երջանկութեամբ :

Կեանքի ազատութիւնը բոլոր մասնազութիւններէ բարձր պէտք է դառնայ : Այս սկզբնատառն է ամէն բարի գործութիւններու : Իսկական ազատութեան արմատը հոս պէտք է փնտանել : Կետութիւն մը չի փողովուրդը իր անձին նման պարտ է պրել : «Անհատական ազատութիւնը—կ'ընէ Բենիամին Կոնստանտ—մարդկային ընկերութեան նպատակն է, անոր վրայ կը շինուի հանրային և մասնաւոր բարոյականութիւնը» : Սա ճշմարիտ քարոզը բարոյական գերագոյն սիզբունք պէտք է բոլոր պետութեանց համար :

Այս բոլորին մէջ, մեր երկրին յուշուցած յաջողութիւնը մեր տաջն է և ամէնուս ալ յայտնի իր ազգատ երեւոյթով : Յսկայն յուսահատողներէն և մեր հայրենիքին ազգազան սե տեանող յուսահանութիւն չեն : Կեանքի յատկանիշները իր մէկէ աւելի երեւոյթներով կը տեսնուի և հոս :

Ճիշտ է որ դեռ պարբերական ջարդերուն, թալաններուն, բռնաբարումներուն վերջ չի տրուեցան : Անոնք կը շարունակեն գործել իրենց աւերները արեւելեան

գաւառներուն մէջ, ինչպէս սովոր են ըսել մեր բարեկամ Իթիհատները, խրաչելով հայաստան բառի անուանական կոչումէն կարծես : Այս ջարդերուն և զուլումներուն պատասխանատուութիւնը կառավարութեան վրայ ձգողներէն ըլլալով, պետական անհատներուն մէջ կոյով, կամքն ու քկարագիրը տեսնողներէն եմ : Երբոր կառավարութեան ղեկը ձեռնհաս և ուղղամիտ անձնաւորութիւններու ձեռքն անցնի բոլոր այս դժբաղդութեանց դուռները, քննադէս և արտաքնադէս—պիտր գոցելի կարծողներէն եմ և միևնոյն ատեն կատարելայ ուղատութիւնը, ճշմարիտ եղմայրութիւնը, տնկեղծ հաւատարմութիւնը հասարակական լայն իրաւակարգերուն մէջ ըլլալը փաստադրերէն :

Մեր ապրած րապէները ըլլալով մին միւսէն մեծ շառնգծուածային բրայուչափ խորհրդաւոր են : Կ'ապրինք փոխանցման շրջաններուն մէջ, կը շուսանք թէ պիտի վայելենք ներկայ օրերէն աւելի լաւ : Երանց նախօրեակին մէջ կը դտնրւինք աշտր : Մենք գաւառացին լրջութեան հրաւիրելով այս առթիւ, կը յանձնարարենք որ թողու այլեւ թմրութիւնն ու անաւարբերութիւնը և ինքնամոլութեան մը գալով իրերու ընթացքը քննէ և իր կեանքին համար ապրելու դասեր հանէ :

ԱՐՄԷՆ ՄԱՆԿՈՒՆԻ

ԳԱՐՆԱՆ ԳԻՇԵՐ

Հովուերգական սիրեց մը դեռ կ'աղմկէ
Լրուութիւնը գաւան անոյ՝ գիշերուան,
Մինչ բսուերոս մարգերուն մեկ հոսեւան
Կը ծիծաղեն ճառագայթներ սասափէ :

Խորհրդաւոր մրմունջներ կան՝ որ հիմա
Սիւղերուն հետ գարնան զրուար գիշերին,
Համբոյրի մը կարօտին պէս կը մարին
Կամ երգի մը նրման՝ որ մեղմ կը դողայ:

Մինչ արծաթէ, նեղ հաւքաներ կ'երկարին
Դեպի դաշտեր, դեպի մարգերն ու պուրակ
Գիշերային խորութեան մէջ ամպաւրփակ,
Եւ ցոյց տալով ժպիտս իրենց սաւսուռին . . .

Ասեղազարդ երկնակամարն անսահման
Կը ցոլանայ ծրփանքին մէջ ջրերուն.
Դեռ կ'ալմկէ մեղմիկ սիրերդ մը հրնշուն՝
Լքուքիւնը գարնան անոյժ գիշերուան . . . :

ԱՐՄԷՆ - ԵՐԿԱԹ

ՎԱՐՔԵՐ ՈՒ ԲԱՐՔԵՐ

Բարեկամիս՝ Պ, ՊԱՆՈՋԵԱՆԻՆ

Բ.

Բողոքին սիրելին Լը ան մկօհնց կարա-
գր. որուն ճակատին լման 25 գարուններ
իրենց համոյրները գրողներ էին: Կիսաշ-
խարհիկ այս պարտնը «նորեկուններու հո-
վերէն անմասն խելք-գլուխ երիտասարդ
մեղած էր ինք իր իւզովը տալիւող»
թաղին հին-գլուխներուն վկայածին հո-
մեմատ, և եղած էր թուղին «բարի ծա-
ղիկը» որպէս սովոր էրն կոչել նոյն թա-
ղի մամիները: Անոր գովելի յատկու-
թիւններէն վերջինն ու առաջինը՝ իր և-
կեղեցանդութիւնն էր: Բազմաբնի տէր-
տէրները իրենց առօրեայ ունայնախօս
ժամանցներուն թերացած չէին ներփոխ-
լու ամէն զի կարագի ծանօթ բարեպաշ-
տութիւնը, և ամէն մարդ լսած էր ու կը
ճանչնար այս «պարտաճանաչ» բարի ծա-
ղիկը. մեծահռչակ-վերջի առնները ա-
պարէզէն քաջուած - Յակոբ պատուելիին
բացառիկ դաստիարակութիւնով խմոր-

ուած բլլալուն՝ ջուրի պէս դոց գիտէր
հին ու նոր կտակարաններէն տառնակ մը
գլուխներ և նարնկէն կտորներ:

Յաճախ Ս. Խաչ եկեղեցին կ'այցելէր
որուն որմերը բարեպաշտ ազգայիններէ
նուիրուած, բաղմաթիւ խաչ - քարերով
զարդարուած էր. պատկառանքով լի այդ
«սրբառաշ քարերուն կը մօտենար համ-
բուրելու որոնք «հրաշքներ կրնային գոր-
ծել եթէ մանանեթի չափ հաւատք կրէին
մարդիկ»: պատուելին այս խօսքերը
այնքան խորունկ ազգեր էին կարագի
վրայ որ ձմեռուան ցուրտ օրերուն ան-
գամ քաղելու կ'երթար անոնցմէ ակնկալ-
ուած զօրութիւնները . . .

*
*
*

Մկօհնց քովտիքը կը բնակէր Խաչոն,
33-նոց մարդուկ մը որ կը ծիւրէր թո-

քախտաւորներու յատուկ նշաններով, գիտական միջոցներով դարմանուելու համար իր ըրած ջանքերէն յուսահատ՝ Աստուածային գթութեան ապաւինած էր, ամէն օր մօռթն ու լուսին Ս. Խաչ կը դիմէր հեւապառ և յանգ կ'առնէր այն մեծակերտ խաչքարին քով՝ ուր Գողգոթան նկարուած էր. մինչև ժամուն յրանալը հազար ու մէկ հեղ կը խոնարհէր ու կը համբուրէր անոր սուքը՝ սր քարին հերոսը կը ներկայացնէր, հոն թողելով իր անտաշէն միջբոսցիւնէն առանձնակ մը միլիոններ:

Միտնց կարագը: Եկեղեցի չէր յաճախէր հիւանդալից ըլլալով, ծով ու պահարդէն տկարացուցեր էին ինքը. առոր հաւար ան չտակած անձանսթ հլաւնդութեան մը՝ որ հետզհետէ արմատ բռնեց իր սրտին մէջ: Բիշկնէրու տեղեկատու ու թիւնը սրտապնդիչ չէր, վառնդի կարագին թուքին մէջ արեան շերտաւորումներ օրը օրին սովորական ու աւտակաւ կը դառնային:

Աչք դպաւ տղուն, վերեւ ընելու չափ առաջ գացին... Թողի մամիները այսօրինակ ցափառութեամբ ող ընդ այլոյ կեկնութեաններ կուտային կարագին

անակնկալ հիւանդութեանը. մինչդեռ անդին կարգ մը լուսամիտ երիտասարդներ իրենց կարծիքներուն մէջ բոլորովին կը տարբերէին ուրիշներէն երբ կը պնդէին թէ՝ կարագ իր ցաւը խաչքարէն փոխ առաւ—յիշելով Խաչի պարագան... և հեզնական չեշտով մը կը կրկնէին.

—Վա՛յ անգութ քարեր, վա՛յ... կարագին այ տարիք... մեր բարի ծաղիկը... —Ճրանմաստ... անհաւաններ... սուս կը պուռային ուրիշ տարիքոտներ: «Նորեկուկն խեղճէր» դեռ չա՛մ է այն միջոցը որ սահմանուած են խմբուելու: Մեր գիտողութեանները ինչ ինչ գործերու մէջ՝ լաւ ընդունելութիւն չգտներ. գոնէ սա աւետարան բռնեց և համարեկ տալու լոռի շան սգործունին թող վերջ մը տան մեր եկեղեցականները եթէ կուզեն Քրդիքապէս անսահման ծառայութեան մը ընել իրենց սեփական հօտին:

ՀՐԱԻՆԻ

Ծ. Ն. — Պիոի քերտրեիք մեր համայնքին ողորդութեամբ: կարդար «Եկեղեցական առողջարաններ» և ըստ այնմ պահանջէ: կրօնականներէ առողջարանական միջոցներու կիրարկումը եկեղեցիէն ներս:

ԴԻՄԱԳԻՏԱԿԱՆ ՓՈՐՁԵՐ

ԳՐԱԳԻՏՈՒՂԻՆ

Յարուրիւն Մանուկեանի

Աչունի լինջ, հազուագիւտ օրերէն մէկն էր այն կիրակին՝ ուր անրացատրելիօրէն գրաւիչ կապոյտ մը՝ երկինքէն ահապ մը խորհրդաւոր զուարթութիւն կը ներարկէր էութենէդ ներս:

Օգին գեղեցկութենէն հրապուրուած՝ մաադիր էինք ծովագնացութիւն մը կատարել այն օրը դէպի Վոսփորի գեղածիծաղ ափերը լիաթոք վայելելու համար

ծովին պարգեւած կազդայրը՝ որուն այնքան կը կարօտէինք Պօլիսի մէջ, մեր բնակութեան պահուն:

Մեկնումի պատրաստուած էինք արդէն, եւ ես՝ գեղեցիկ տեսարաններու վայելքին հեռանկարովը կ'օրօրէի միտքս, հեռու Պօլիսի ժխորէն և այն տենդալից կեանքէն՝ ուր մարդ կըզգայ թէ ակամայ սպառումի դատապարտուած է, անխու-

սափելի օրէն բռնուած ըլլալով եռուզե-
ոթ յորձանքին մէջ :

Ուրախութիւնս սակայն չուտով անհե-
տացաւ, որովհետեւ նոյն վայրկեանին
ցրուիչին կողմէ Գեղամի յանձնուած նա-
մակ մը՝ հաբկադրեց մեզ ուրիշ առիթի
վերադաճել մեր պտույտը :

Ձի կրչի բարկութիւնս գտել, այն
նամակին պատճառով որ կուգար զրկել
մեզ ճշմարիտ հաճոյքներու վայելքէն. ու
կը խրհէի թէ մեծ սխալ մը կը գործե-
ինք՝ հրաժարելով բացառապէս հաճելի
նաւագնացութենէ մը :

Գեղամ, սակայն գուշակելով որանե-
ղութիւնս պատճառը՝

—Ուրիշ օրի կը յետաձգենք ըստ
պտույտը և յարեց

—Պատշաճն չառաւ տեղի՝ չահեկան է
ներկայացող ժամանցը՝ քանի որ այդ ու-
սիթով, հետաքրքրաշարժ թիփերու պիտի
հանդիպինք, տարեկամական յարկի մրտախ-

Այս խոսքին վրայ՝ լուռ մնացի, ար-
դէն դիտած էի որ խառնուածքով աս-
րօքնակ կամ չահեկան անձերու մասին
ուէ տեղեկութիւն հազարդուած աստեղ
Գեղամի խանդավառ հետաքրքրութիւն մը
կ'ըզար ու ճիշտ այդ պատճառով էր որ
կը ն'սխալեի վտարի պտույտը յետաձգել

Կէն ժամէն, կառք մը, սանձաւորակ
վաղքով՝ մեզ կը հասցնէր այն աստեղ՝ ուր
ցերեկայից մը սարքուած էր : Դուռը ար-
դէն բացուած էր և հիւրնկոյ տանտէրը
կը փութար ժպտագին բնդունելութեամբ
մեզ որան տալնորդել և այն վայելեա-
նին՝ խորհրդաւոր շեշտով մը՝ կան-
ջին կը փսփար :

—Ձեզի պիտի ներկայացնեմ չահեկան
կին մը որ միւսնոյն աստեղ հանրամանօթ
գրադիտուէի մէ : Այս խոսքին վրայ,
իրեն հետեւելով մուտք կը գործէինք, բն-
դաձակ անհետ մը ուր գուարթ մտնո-
յալով մը անգլիստեւ էր երկսեռ հրատար-
կալներու ոգևորուած խօսակցութեան չը-

նորհիւ :

Ամէն բանէ աւելի՝ ուշադրութիւնս կը
գրաւէր այնտեղ ցուշադրուող նորոյթի
մրցումը նաեւ այն փութկոտութեանը՝
զոր այդպիսիները ցոյց կուտային իրենց
գերազանցութիւնը հաբկադրելու մտա-
գրութեամբ :

Պայմանագրական ներկայացումներ
չուտով տեղի ունեցան ու վայրկեանաւոր
ամէն կողմէ ակնարկներն ուղղուեցան
մեր վրայ : Կիները մասնաւոր շահագր-
գութեամբ կը հետեւէին Գեղամի խո-
սակցութեան որ բռնուն հետաքրքրութիւն
կ'առնէին իրենց չըջանալին մէջ :

Անկիւն մը, զուարթ օրիորդներ ոգե-
ւորուած վիճարանութիւն կը կատարէին
այժմութիւն ունեցող հարցի մը շուրջ
որ զիս այ կը հետաքրքրէր այնպէս որ
բնազգաբար իրենց կողմը կ'ազդէի քայ-
լերս՝ մասնակցելու համար այդ խօսակ-
ցութեան :

Ամէնքն ալ, ուշադրաւ արդու զարդով
պճնուած ինքնատիպ արարչք մ'ունէին,
իրենց ընդհանուր գիծերուն մէջ, զոր
հաճոյքով կը դառնէ :

Հեղձեմէ պատուասիրութիւններ տե-
ղի կ'ունենային ու տանախրոհին՝ շնոր-
հալի ժպտով, անձամբ կը հակէր այդ
արարողութեան :

Մեր խօսակցութիւնը ստաիճանաբար
գրաւորութեան շուրջը կանգ կ'առնէր
որու վրայ օրիորդները կը փութային բ-
րենց նախասիրութիւններն հազարդել,
բայց ամէնքն ալ զրաւելլ հոկումներով
ստգորուած՝ այնքան որոշ պատճառաւոր-
ութիւններով կը պաշտպանէին իրենց
թեզը որ կատարեալ վայելք մը կը նկա-
տէի ունիւղրիլ՝ իրենց միջև կատարուող
զաղասիարի հաճելի պայքարներուն :

Ճշտ այդ վայրկեանին, մեր խմբակին
մօտեցաւ նուրբ դիմաւորութեամբ, մըջոտա-
սակ կին մը որուն մարմինը շնորհալի
գիրութեամբ մը աւելի գեղեցկացած էր :

Ամբողջինս կազմուածքով կին մէր ան, արտերուն նուրբ կարմիրը՝ և շրթունքներուն լայն բացուածքը նմայքոտ տպաւորութիւն մը կը ձգէր վրաս, ու մարդ տկոժայ սարսուռ մը կ'զգայ երբ կ'ունկեդէր իր խոտակցութեան, մանաւանդ եւ՝ որ տեսակ մ' գիտութեամբ կը հաճակուէի երբ ան կը շարունակէր խոտակցութիւնը այնքան հրապուրիչ եղանակով: Ամէն անգամ որ ան՝ կը բանար և ամխաւքէ բաւ մը կ'արտատանէր: Իր սե, արտալայտի, աչքերը մանաւանդ՝ որուն մէջ հրայրքը կը լոցաւզուէր, երբ վրաս երբեմն յառած կը նստային սեւեռու մ' մանրթիւթ՝ կարծես չանթառար կ'ընէին զիս: Երբէք կնոջ մը առջև, այնքան խնդինքս տկարացած չէի զգայած սրբան այդ պահուն: Իր զոգարէի բոսերուն ձայնը, ու խնդեցնող գեղեցիկութիւն մը մրտայած՝ կարծես զոտրոյծ պիտի ընէին զիս բայց պէտք էր սխալից, գոպկու համար կրած ոգուտրութիւններու:

Օրիորդները անտոմար յարգանք գոյց կուտային նորեկ տիկինին հանդէպ, որ կարծես գիտակցութիւնն ունէր իր հմայքին: Այն վերջինը զիս այ գիտած էր ուշք ուշով, ապառնութարար վերէն վար չափելու: Վերլուծիլու գործողութիւն մը էր կատարածը որ շիտտութեան կը մատնէր զիս:

Ինչո՞ւ, սակայն, այդ նպատակաւոր խաղաղիւ նայուածքը, այդ կեան, էր անոս որ անբացատրելի կը մնար ինծի:

Տիկինը հիմա՝ զուարթորէն ձեռք կ'առնէ վիճարտութիւնը. հեղինակաւոր շեշտով, նորանոր բացատրութիւններ կ'աւելցնէր իր կարգին, բայց կարծիքները կը գատուորէր և անոնց ամբողջութենէն ընդհանուր իրողութիւն մը հետեցնելով, հաճելի կատակով մը՝ վերջ կը դնէր վիճարտութեան:

Իր միջամտութիւնը անքան հաճելի օ-

րէն մեկնայն ատեն տիրապետող եղանակով մը կատարած էր որ ոչ մէկ կողմէ ընդդիմադրութիւն տեղի ունեցաւ, ու մինչ հիտդկոտ ժողովներու մէջ, իր վերջին բաւերը կ'արտատանէր նոյն այդ պահուն՝ սրբի նմանող արտալայտիչ տկարեկր սեւեռը վրաս մինչ հոգեկն ոտրսուադի տեսք մոգիչ արրեցութեան տակ:

Պահ մը լռութիւն տիրեց. հետզհետէ օրիորդներու կազմած շղթան խզուեցաւ ու անոնք անզգայաբար ցրուեցան ընդարձակ սրահին մէջ նոր խմբակներ կազմելու համար:

Քովս մնաց միայն այն խորհրդաւոր տիկինը որ լար նայուածքով կը շանթահարէր զիս:

Չեմ գիտեր ինչո՞ւ, նստած տեղս գտնուած կը մնայի հակառակ ներքին բնազդի ազդարարութեան որովայնի մոտմայր քովէն:

